

## **Անդորայի տնտեսության ներկայիս իրավիճակը և ապագայի պլանները**

Անդորան դասվում է զարգացող երկրների շարքին և որպես այդպիսին՝ փորձում է հնարավորինս նպատակային քայլեր ձեռնարկել՝ տնտեսությունը արագ զարգացնելու նպատակով: Թերևս, նման զարգացումների հիմքը (շարժառիթը) տեսնում է տնտեսությունը համաշխարհային չափանիշներին համապատասխանեցնելու մեջ, ինչպես բանկային սեկտորում այնպես էլ Անդորայի տնտեսության մնացած ճյուղերում: 2007 թվականի մայիսի 9-ին, Անդորայի առևտրի պալատի նախաձեռնությամբ տեղի ունեցավ կոնֆերանս՝ “Անդորայի տնտեսությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու վերաբերյալ” թեմայով՝ նախապես ակնկալելով Անդորայի իշխանությունների օժանդակությունը: Հարկ է նշել, որ Անդորան իր բանկային համակարգի գործունեությունը մշատապես փորձել է կազմակերպել համաշխարհային չափանիշներին և փորձին համապատասխան՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են ռազմավարական սեկտորի ռիսկերը, վերահսկող համակարգերը, Բազել 2-ի պահանջները, ֆինանսական կայունությունը, բանկային գաղտնիքը և թափանցիկությունը, ֆինանսական և բանկային ապահովագրական ծառայությունները:

### **Ֆինանսական հաշվետվությունների համաշխարհային չափանիշները (ՖՀՀՉ)**

Գլոբալիզացումն օժանդակում է կորպորատիվ հաշվետվությունների կառուցվածքների ունիֆիկացմանը: Տեղեկատվության հասանելիության և համեմատականության կարիքը առաջ է քաշել համաշխարհային մասշտաբով կիրառելի հաշվարկման չափանիշների ինտեգրումը՝ հնարավորություն ընձեռնելով ընկերության ֆինանսական միջոցները հաշվարկել և վերլուծել անկախ բիզնեսի իրականացման վայրից: Այս առումով, 2005 թվականի հունվարի մեկին ֆոնդային բորսայում ներգրավված բոլոր ընկերությունները պարտադիր կերպով պետք է կիրառեին Եվրոպական պառլամենտի և Օրենսդիր խորհրդի, Եվրոպական պառլամենտի և Դիրեկտիվ խորհրդի կողմից ներկայացված ՖՀՀՉ-ն, որն իր ուրույն ազդեցությունն ունեցավ նաև բոլոր այն հարևան երկրների վրա, որոնց հետ Անդորան վաղուց սերտ առևտրային կապեր էր հաստատել: Ինչ վերաբերվում է բանկային սեկտորին, ապա հարկ է նշել, որ Իսպանական բանկն արդեն հավանություն է տվել 2004 թվականի դեկտեմբերի 22-ին ընդունված նոր դիրեկտիվներին, որն իր մեջ ներառում է նկատելի փոփոխություններ մեր օրերում կիրառելի հաշվարկման սկզբունքների վերաբերյալ:

Անդորայում դեռ գոյություն չունի պաշտոնապես ընդունված հաշվարկման չափանիշներ՝ բացառությամբ ֆինանսական համակարգի համար նախատեսված “հաշվարկման աղյուսակի”, որն էլ հրապարակվել է Անդորայի ազգային ֆինանսական ինստիտուտի կողմից 1999 թվականին: Այս չափանիշները մշակվել են Իսպանիայի բանկի հաշվարկման չափանիշների հիման վրա և բավականին հարմար են կիրառության համար, այնուամենայնիվ, Անդորան մտադիր է դրանք վերանայել և հնարավորինս համապատասխանեցնել ֆինանսական հաշվետվությունների համաշխարհային չափանիշների բնույթին: Ներկայումս, Անդորայի գործադիր մարմինները մշակում են մի նոր հաշվարկման համակարգ՝ հիմք ընդունելով ՖՀՀՉ-ն, որն էլ իր վերջնական հաստատումից հետո կիրառության կհանձնվի համապատասխան ընկերություններին կամ ձեռնարկություններին: Կարճ ասած, այս ամենի նպատակը ֆինանսական հաշվետվությունների համաշխարհային չափանիշների ինտեգրումն է: Այսպիսով, ինտեգրումը հեշտացնելու նպատակով 2006 թվականի առաջին եռամսյանկի ընթացքում Անդորայի բանկերի ասոցիացիան, համաշխարհային հիմնական աուդիտ իրականացնող առևտրաարդյունաբերական ձեռնարկությունների (ֆիրմաների) խորհրդով դասընթացներ է կազմակերպել՝ “Ֆինանսական հաշվետվությունների համաշխարհային չափանիշների ներթափանցումն ու ազդեցությունը” թեմայով, որից հետո զեկույցը բաշխվել է Անդորայի բոլոր բանկերին:

### **Գործընթացներ Բազել 2-ի շրջանակներում**

Համաշխարհային կապիտալին վերաբերող վերամշակված չափանիշների բարդ բնույթը և

կապը Ֆինանսական հաշվետվությունների համաշխարհային չափանիշների հետ, ինչպես նաև յուրաքանչյուր երկրում առկա օրենսդիր և վերահսկող համակարգերը առաջ քաշեցին Բազել 2-ի ինտեգրման հնարավորությունը, որը, սակայն, չի կարող ուղեկցվել առանց դժվարությունների: Բազել կոմիտեի իրական և վերջնական նպատակը բանկային գործունեությունում ֆինանսական համակարգի վստահելիության և ուժեղացման ապահովումն է՝ վերահսկողություն սահմանելով յուրաքանչյուր գործունեության կամ մարմնի՝ իրենց իսկ ռիսկերի կառավարման գործընթացների և մոդելների, վերհսկման գործընթացի և շուկայի գործելակերպի նկատմամբ: Ավելին, նախագիծը նպատակ ունի ոչ միայն շեշտը դնել ավանդական վարկի կամ շուկայի ռիսկերի վրա, այլ նաև ներառել կապիտալի ադեկվատության պահանջները՝ գործունեության և այլ ռիսկերը մարելու նպատակով, ինչպես նաև առաջ է քաշում “որակական” պահանջներ՝ նման ռիսկերը կառավարելու նպատակով: Ստորև ներկայացված են երեք դրույթներ, որոնք հիմք են հանդիսանում Բազել 2-ի ներդրման համար՝ նպատակ ունենալով ընդգծել օրենսդրի պահանջները ռիսկերի կառավարման հիմնական տնտեսական սկզբունքների հետ մեկտեղ:

- Առաջին դրույթը ներառում է կապիտալի օրենսդրի պահանջները և ամրապնդում ավանդական կապիտալի հարաբերակցությունը ռիսկային ակտիվների, որը չպետք է պակաս լինի 8%-ից, այնուամենայնիվ, այն չի արգելում փորձառու “գործիքների” կիրառումը, մի շարք անդորական մարմինների կողմից՝ հաշվի առնելով իրենց ռիսկային գործոնները:
- Երկրորդ դրույթը սահմանում է վերահսկողության գործընթացը՝ ամրապնդելով կորպորատիվ կառավարման լավագույն փորձի և ներքին վերահսկողության սկզբունքները: Այդ պատճառով էլ վերահսկող մարմինը կարող է բանկից պահանջել կապիտալի ավելի բարձր տոկոս ապահովել, քան առաջին դրույթի պահանջն է:
- Երրորդ դրույթը նպատակ ունի կարգապահություն սահմանել շուկայի նկատմամբ՝ պայմանավորված ինֆորմացիայի հասանելիությամբ և համեմատելիությամբ:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ այն մարմինները, որոնք կարողանում են առավելագույնս կառավարել իրենց ռիսկերը, ի վիճակի են օգտվել որոշակի առավելություններից իրենց կապիտալի ադեկվատության պահանջները հաշվելիս: Այդ պատճառով, այն մարմինների համար, որոնք ձգտում են օպտիմացնել իրենց (օրենսդիր) կարգավորող կապիտալը, այս նոր նախագիծը կարող է ունենալ առաջնային կարևորություն իրենց ինֆորմացիոն տեխնոլոգիական համակարգերի, բիզնես գործընթացների և ֆինանսական նպատակների համար:

2007 թվականի մարտի 21-ին, Անդորայի բանկերի ասոցիացիան Կատալան հաշվարկման և կառավարման ասոցիացիայի հետ մեկտեղ ներկայացրեց մի գիրք՝ “Բազել 2-ի շրջանակներում բանկային արդյունաբերությունը” վերնագրով:

### **Փողերի լվացման կանխարգելման շրջանակներում**

Երկար տարիներ պայքարը փողերի լվացման դեմ, այն փողերի, որոնք ձեռք են բերվել անօրեն գործունեությունների արդյունքում, առաջնային կարևորություն ունեցող հարցերից մեկն էր, հատկապես Անդորայի բանկային համակարգի համար: 1990 թվականին Անդորայի բանկային համակարգը նախընտրեց ինքնական ինքնակարգավորիչ գործունեություն ծավալել՝ փոփոխություններ կատարելով իր քրեական օրենսգրքում՝ ներկայացնելով անօրեն գործունեությունների արդյունքում ձեռք բերված փողերի լվացման ծրագիրը: 1995 թվականին ընդունվեց առաջին օրենքը՝ ուղղված համաշխարհային հանցագործության դեմ, որն էլ իր վերջնական ավարտին հասավ 2000 թվականին, այն է՝ “Օրենք քրեական հարցերի և անօրեն ճանապարհով ստացված փողերի կամ արժեթղթերի լվացման շուրջ համաշխարհային համագործակցության մասին”, և ապա ստեղծվեց լվացումը կանխարգելող մարմին (ԼԿՄ): Վերջինս մի անկախ մարմին է, որն օժանդակում է փողերի լվացման հետ կապված կանխարգելող միջոցների, մեթոդների մշակմանն ու առաջ քաշմանը, ինչպես նաև արտերկրյա մարմինների հետ համագործակցման հաստատմանը: Այս օրենքն ուղղված էր նաև հաճախորդների հետ քաղաքավարի հարաբերությունների ստեղծմանն ու

հաճախորդների վերաբերյալ կազմված ֆայլերի պահպանմանը: Այն վերջնականապես հաստատվեց 2002 թվականի հուլիսի 31-ին:

2005 թվականի փետրվար ամսին, Անդորայի Քրեական օրենսգիրքը նկատելի փոփոխություններ կրեց, որտեղ լիովին պարզաբանվեց “փողի լվացում” հասկացության բուն իմաստը և հաստատելով, որ հնարավոր քրեական գործունեությունների շարքը, որն էլ առիթ է հանդիսացել փողի լվացման առաջացման համար, ընդարձակվել է: Անդորայի Քրեական Օրենսգրքի փոփոխությունների հետ մեկտեղ փոփոխություններ կրեցին նաև որոշակի հոդվածներ՝ կապված “Քրեական հարցերի և անօրեն ճանապարհով ստացված փողերի կամ արժեթղթերի լվացման շուրջ համաշխարհային համագործակցության մասին” օրենքի հետ: 2007 թվականի ապրիլի 11-ին Ընդհանուր խորհուրդը որոշում կայացրեց փոփոխությունների ենթարկել 2005 թվականի մարտի 23-ին ընդունված Անդորայի քրեական օրենսգիրքը՝ այն համապատասխանեցնելով կոռուպցիայի վերաբերյալ քրեական օրենքի կոնվենցիային (համաձայնագրին)՝ հաստատված Եվրոպական խորհրդի կողմից 1999 թվականի հունվարի 27-ին և Անդորայի իշխանության կողմից 2001 թվականի նոյեմբերի 8-ին: Այսպիսով Անդորան այժմ աշխատում է վերոհիշյալ օրենքի նախնական տարբերակի վրա: Ստորև ներկայացված են այդ տարբերակի որոշակի դրույթներ:

- Վերլուծել ահաբեկչության ֆինանսավորմանը վերաբերող գործունեությունները;
- Ընդարձակել և ուժեղացնել վերահսկողությունը անհատների և ընկերությունների նկատմամբ;
- Հավաստիացնել, որ ԼԿՄ-ի կողմից ներկայացված տեխնիկական պաշտոնական հաղորդակցական միջոցները վերահսկողության տակ են առնված համապատասխան վերստուգող մարմինների կողմից;
- ԼԿՄ-ին հնարավորություն ընձեռել ինքնուրույն որոշումներ կայացնել, բացառությամբ այնպիսի դեպքերի, որոնք դասվում են ամենալուրջ դեպքերի շարքին, և որոնք կշարունակվեն մնալ Անդորայի կառավարության պատասխանատվության ներքո:

Այնուամենայնիվ, նման փոփոխությունները չեն կարող խոչընդոտ հանդիսանալ ղեկավար մարմինների աշխատանքների համար, քանի որ Անդորայի բանկերը գործում են վարվելակերպի կանոններին համապատասխան: Արտաքին աուդիտները պարտավոր են լինել քաղաքավարի ցանկացած պարագայում: Օրենքներում համապատասխան փոփոխությունների ավարտից հետո բանկերը նախատեսում են աշխատակիցների վերապատրաստման լայն ծրագրի իրականացում, որի վերաբերյալ 2007 թվականի առաջին եռամսյակին վերապատրաստողական դասընթացների առաջին փուլն արդեն տեղի է ունեցել՝ ուղղված փողի լվացման կանխարգելմանը: Այդ դասընթացներին մասնակցել են Անդորայի ֆինանսական համակարգի աշխատակիցների մեծամասնությունը: